ները։ Ուսուցիչը իրաւունք չունի դիմել աշակերտներին խիստ նկատողութիւններով։ Եթէ աշակերտը մեղադրւում է, այդ դէպքում դպրոցի Տեսուչը կամ դասատուն նորան նկատողութիւն է անում շատ քաղաքավարի ձևով, զարգացնելով նորա մէջ բարոյական ինքնագիտակցութիւնը։ Դպրոցում ամբողջ կրթութիւնը տարւում է այն ճանապարհով, որ աշակերտների մէջ առաջ կան ինքնագիտակցութիւն և համոզմունքների մշակումն։ Այդ տեսակ կրթութեան նպաստում են և ուսուցիչների ու պրոֆեսորների օրինակելի կեանքը։ Ուսուցիչը չէ կարող աշակերտից պահանջել այն բարի յատկութիւնը, ինչ որ ինքը չունի։ **Օրինակն է ամենագլխաւոր քարոզիչը եւ ամենակարեւոր դաստիարակը։** Դասատուների համար կան առանձին հրահանգութիւն, որի համաձայն և նոքա պէտք է վարուեն։ Ուսուցիչը պատշաճ եղանակով վերաբերուելով դէպի աշակերտները՝ կարողանում է հասնել պահպանելու իւր հեղինակութիւնն այն աստիճանի, որ աշակերտները ենթարկւում են նորան ինքնակամ և բարեխղճաբար։ Դպրոցը սովորեցնում է աշակերտներին գործել անձնական ազատութեամբ և ազատ մտածողութեամբ։ Աշակերտները դպրոցին կից հիմնել են մուզիկայի, գրականական և մարմնամարզութեան ընկերութիւններ։ Աշակերտները դպրոցում հրատարակում են ամսագիր, որը տարածւում է աշխարհիս զանազան կողմերը։ Մի խօսքով այդ դպրոցը ներկայանում է մի շատ օրինակելի բարձրագոյն դպրոց։ Արդէն 30 տարի է որ այդ դպրոցում աւանդւում են առարկաները անգլիերէն լեզուով, մինչդեռ առաջ եղել է արաբերէն։

## ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

**Նոր Պապը։** Պիոս X-րդ պապի մահից յետոյ Հռոմի գահի վրայ բազմեց վերջերս ընտրուած Բենեդիկտոս XV պապը։ Բենեդիկտոս XV պապը ծնուել է Իտալիայի Ճենովա քաղաքում 1854 թ. Նոյեմբերի 21-ին։ Նորա ծնողներն էին ազնուական դասակարգին պատկանող մարկիզ Ջուզէպպէ և մարկիզուհի Ջիօվաննա Միլիօրաթի, իրանց Ջիաքօմօ որդուն օժտեցին բարձր ուսմամբ և կրթութեամբ։ Ջիաքօմօն աւարտեց իւր բարձր ուսումը 1875 թ. և արժանացաւ իրաւագիտական պատուի, իսկ 1878 թ. դեկտ. 21-ին ձեռնադրուեց քահանայ և աստուածաբանական գիտութեանց վարդապետի աստիճանին արժանացաւ։

1885 թ. նշանակուեց քարտուղար Մադրիդի առաքելական նուիրակ Ռամպօլլա կարդինալի, որի հետ եկաւ 1887 թ. Հռոմ, որտեղ Վատիկանի դիւանագիտական վարչութեան մէջ նախ իբրև ատենադպիր և ապա իբրև փոխանորդ կարդինալ Ռամպօլլայի՝

պաշտօն վարեց դրեթէ 20 տարի։ 1907 թ. նորոգ հանգուցեալ Պիոս X պապի ձեռքով օծուեց արքեպիսկոպոս Բօլօնիայի և այս տարուայ մայիսի 25-ին դարձաւ կարդինալ։ Երբ կօնկլաւը վերջացրեց նոր պապի ընտրութիւնը և դելլա-Կիեզան համաձայնութիւն յայտնեց պապ դառնալ Բենեդիկտոս XV անունով, նրան հագցրին նախօրօք պատրաստած սպիտակ զգեստները, որոնք շատ կարճ ձև ունէին, որովհետև նոր պապը ինքը կարճ մարդ է։ Կօնկլաւի քարտուղարը արձանագրութիւն կազմեց, իսկ կամերլօնգը զանգով յայտնեց մարշալին կօնկլաւի աւարտման մասին, և դռները բացուեցին պաշտօնական անձանց ներս թողնելու համար։

Սիքստինեան աղօթատանը սեղանի առջև դահ դրուեց, նոր պապը նստեց նրա վրայ, և բոլոր կարդինալները հերթով գլուխ տուին նրան՝ ձեռքը համբուրելով։

Կօնկլաւի քարտուղարը պապին մատուցեց սպիտակ փեզոյրը (թաւշեայ գլխարկ) և ստացաւ նրանից կարդինալի փեզոյրը։ Ըստ աւանդութեան այն նշանակում է, որ մօտիկ կոնսիստորիայում նա կարդինալ է նշանակուելու։

Մինչ այդ՝ մի ուրիշ կարդինալ ս. Պետրոսի պատշգամբից յայտնեց ժողովրդին ընտրութեան հետևանքի մասին հետևեալ խօսքերով.

—Papam habemus! Ձեզ մեծ ուրախութիւն եմ յայտնում. մենք պապ ունենք։ Նրա անունն է կարդինալ դելլա-Կիեզա, որ ընդունեց Բենեդիկտոս XV անունը։

Ցերեկոյ հանդիսաւոր թափօրով կարդինալները դուրս եկան կօնկլաւից։ Առաջից գնում էր պապական գվարդիան, նրա ետևից արարողապետները, կարդինալութեան թեկնածուները, մաժորդոմները և քարտուղարները, նրանց ետևից կարդինալները և նոր պապը։ Թափօրը դահլիճներով առաջ է շարժւում դէպի ս. Պետրոսի տաճարը։ Ողջ ճանապարհին երկու կողմը պատնէշների պէս կանգնած էին հոգևորականութիւնը, դեսպանութեան պաշտօնեաները և Վատիկանի պալատում ծառայողները։

Պապի մօտենալուն պէս ամենքը ծունր էին դնում, և պապը օրհնում էր նրանց։

Ս. Պետրոսի մեծ դահլիճի մուտքի վերև, տաճարի ներսը, լուսամուտի առջև՝ ուր խմբւում է ժողովուրդը, տախտակամած էր շինուած։ Այդ բարձր տախտակամածից Բենեդիկտոս XV-ը օրհնեց իր նոր հօտին։

Առաջ այդ օրհնութիւնը տեղի էր ունենում դրսի լուսամուտի մօտ և ասվում էր՝ urbi et orbi, այսինքն Հռոմին և աշխարհին. բայց այն ժամանակից, երբ պապը դադարել է քաղաքական իշխանութիւն ունենալուց, օրհնութիւնը Վատիկանի պատերից դուրս չէ անցնում...

Դրանից յետոյ, նոյն արարողութեամբ թափօրը վերադարձաւ Վատիկան։ Դիւանապետ կարդինալը և մաժորդոմը պապին տարան պապական սենեակները, ուր նա իր ողջ կեանքը բանտարկուած է մնալու։

Բ. վ. Ս.